ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-9/9-1

ք. Երևան «03» 09 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-Ն, ի դեմս տնօրեն Բ. Թադևոսյանի, ով գործում է ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **30** օրից ավելի,

2.1.8 Չնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **31,785,350 (երեսունմեկ միլիոն յոթ հարյուր ութսունհինգ հազար երեք հարյուր հիսուն)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա 15 բանկային օրվա ընթացքում՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է **14** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Արզումանյան 32-10
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Էյչ-Էս-Բի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01210095
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-9/9- 1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Անվանում	Տեխնիկական բնութագիր	ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԸ	ԱՐՏԱԴՐՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐԸ
11.	C -Ռեակտիվ սպիտակուց թեսթ	300 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	CRP LX, 300Tests, cobas c, Integra	Roche Diagnostics	Գերմանիա
12.	Հիմնային ֆոսֆատազա 200 թեսթ	Լրակազմում 200 թեստ: Նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	ALP IFCC Gen.2, 200T, cobas c111	Roche Diagnostics	Գերմանիա
13.	Մագնեզիում 100 թեսթ	Լրակազմում 100 թեստ: Նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար:Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 15-25C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	MG 100T cobas c 111	Roche Diagnostics	Գերմանիա
15.	հալոգեն լամպ LAMP HALOGEN 12V/20W ASSY	Նախատեսված Կոբաս c111 անալիզատորի համար, 12V/20W	LAMP HALOGEN 12V/20W ASSY	Roche Diagnostics	Գերմանիա
16.	Combur- 10 UX	Combur- 10 UX Urisys 1100 սարքի համար, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	Combur-10-UX 100 Str.	Roche Diagnostics	Գերմանիա
18.	FINNTIP 2.5ML ծայրադիր	2.5ML ծայրադիրներ, գործարամային փաթեթավորմամբ, նախատեսված է Start 4 լաբորատոր անալիզատորի համար	Finntips 2.5ml (X100)	Diagnostica STAGO (Thermo Fisher Scientific)	Ֆինլանդիա
20.	Պրեսիկոնտրոլ TnT 4X2 ml	Լրակազմում 4x2 մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար	Troponin PC Elecsys	Roche Diagnostics	Գերմանիա
21.	Պրեսիկոնտրոլ Multimarker 6X2ml	Լրակազմում 6X2 մլ կամ համարժեք քանակի, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար	PreciControl Multimarker Elecsys	Roche Diagnostics	Գերմանիա
30.	Դեպրոտեինայզեր 125 մլ	125մլ, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	DEPROTEINIZER (125 ML)	Roche Diagnostics	Շվեյցարիա

32.	Գլյուկոմետրի ստրիպներ N50	Լրակազմում 50 ստրիպ, գործարանային փաթեթավորմամբ, նախատեսված Accu-Chek Active տեսակի գլյուկոմետրի համար:	Accu-Chek Active	Roche Diabetes Care	Գերմանիա
35.	Պանկրեատիկ-ամիլազա, 15 թեսթ	Reflotron Pankreas-Amylase նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար որը աշխատում է ռեֆլակտրոմետրիաի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, լրակազմում 15 ստրիպ, հերմետիկ փակ գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-P-Amylase 15 Str.	Roche Diagnostics	Գերմանիա
36.	Ամիլազա 15 թեսթ	Reflotron Amylase նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար որը աշխատում է ռեֆլակտրոմետրիաի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, լրակազմում 15 ստրիպ հերմետիկ փակ, գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-Amylase 15 Str.	Roche Diagnostics	Գերմանիա
37.	Խոլեսթերոլ, 30 թեսթ	Reflotron Cholesterol նախատեսված Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար որը աշխատում է ռեֆլակտրոմետրիաի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, լրակազմում 30 ստրիպ հերմետիկ փակ, գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-Cholesterol 30 Str.	Roche Diagnostics	Գերմանիա
38.	Կրեատինին կինազա 15 թեսթ	Reflotron CK նախատեսված Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար որը աշխատում է ռեֆլակտրոմետրիաի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, լրակազմում 15 ստրիպ հերմետիկ փակ, գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-CK 15 Str.	Roche Diagnostics	Գերմանիա
39.	Կրեատինին 30 թեսթ	Reflotron Creatinine նախատեսված Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար որը աշխատում է ռեֆլակտրոմետրիաի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, լրակազմում 30 ստրիպ հերմետիկ փակ, գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-Creatinin 30 Str.	Roche Diagnostics	Գերմանիա
40.	ԱԼՏ 30 թեսթ	Reflotron GPT(ALT) նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար որը աշխատում է ռեֆլակտրոմետրիաի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, լրակազմում 30 ստրիպ հերմետիկ փակ, գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-GPT 30 Str.	Roche Diagnostics	Գերմանիա
41.	ԱՍՏ 30 թեսթ	Reflotron GOT(AST) նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար որը աշխատում է ռեֆլակտրոմետրիաի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, լրակազմում 30 ստրիպ հերմետիկ փակ, գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-GOT 30 Str.	Roche Diagnostics	Գերմանիա
42.	Տրիգլիցերիդների 30 թեսթ	Reflotron Triglycerides նախատեսված է Ռեֆլոտրոն	Reflotron-	Roche Diagnostics	Գերմանիա

		բիոքիմիական սարքի համար որը աշխատում է ռեֆլակտրոմետրիայի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, լրակազմում 30 ստրիպ հերմետիկ փակ, գործարանային փաթեթավորմամբ:	Triglyceride 30 Str.		
43.	Միզանյութ 15 թեսթ	Reflotron Urea նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար որը աշխատում է ռեֆլակտրոմետրիայի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, լրակազմում 15 ստրիպ հերմետիկ փակ, գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-Urea 15 Str.	Roche Diagnostics	Գերմանիա
45.	Ամիլազա Պանկրեատիկ 200 թեսթ	Լրակազմում 200 թեսթ, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	AMY-P, 200Tests, cobas c, Integra	Roche Diagnostics	Գերմանիա
46.	Կալցիտոնին CS կալիբրատոր	Կալիբրատորը նախատեսված Կալցիտոնին ռեագենտի համար, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Calcitonin CS Elecsys	Roche Diagnostics	Գերմանիա
47.	Պրո-GRP CS կալիբրատոր	Լրակազմում 4x1 մլ ,2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	proGRP CS Elecsys	Roche Diagnostics	Գերմանիա
48.	Ցիտոմեգալովիրուս 1X50LC Nano	Նախատեսված LC Nano անալիզատորի համար; լրակազմում՝ 50 տեստ; պահպանման ջերմաստիճանը՝ -15-ից -60°C, նախատեսված է in-vitro ախտորոշման համար; պարունակում է նուկլեինաթթուների էքստրակցիայի և ամպլիֆիկացիայի արդյունավետության գնահատման ներքին ստանդարտ;	GeneProof Cytomegalovirus (CMV) PCR Kit	GeneProof	Չեխիա
49.	Տրանսպորտային միջավայր Uniter նմուշառման համար ստերիլ, տամպոնը և փորձանոթը միջավայրով, N1	Պլաստմասե ձողիկ բամբակյա ծայրով Ստյուարտ միջավայրով պլաստմասե փորձանոթի մեջ (UNI-TER SWABS STUART CLR. PLASTIC STICK COTTON HEA), գործարանային փաթեթավորմամբ տուփ:	UNI-TER sterile swab in polypropylene test tube. Stuart medium. Plastic stick. Individually wrapped.	Vacutest Kima Group	Իտալիա
51.	Հալոգենային լամպ Cobas 400 plus-ի համար 12Վ/100Վատ	12V/100W հզորությամբ, գործարանային փաթեթավորմամբ:	LAMP HALOGEN 12V/100W ASSY	Roche Diagnostics	Գերմանիա
53.	LC109 զտիչ	Medica Pro R60 -ի ջրի դեիոնիզատորի համար նախատեսված, 0.05 միկրոն (μm) թողունակությամբ, LC109, գործարանային փաթեթավորմամբ:	LC 109 Ultra Microfilter	ELGA	Ճապոնիա
54.	LC174 քարթրիջներ	Medica Pro R60 -ի ջրի դեիոնիզատորի համար նախատեսված,	LC 174 Medpure	ELGA	Միացյալ

		LC174, գործարանային փաթեթավորմամբ:	L1 DI pack		Թագավորություն
55.	LC177 նախնական զտիչ	Medica Pro R60 -ի ջրի դեիոնիզատորի համար նախատեսված, LC177, գործարանային փաթեթավորմամբ:	LC 177 L2 Pre-Treat	ELGA	Չինաստան
56.	LC180 ռներսիոսմոսային զտիչ	Medica Pro R60 -ի ջրի դեիոնիզատորի համար նախատեսված, LC180, գործարանային փաթեթավորմամբ:	LC 180 Reverse Osmosis module	ELGA	Միացյալ Թագավորություն
57.	Ral StainBox սարքի ներկերի հավաքածու	MCDh 1 - 1x230ml, MCDh 2 - 2x230ml, MCDh 3 - 1x230ml, MCDh 4 - 4x230ml, գործարանային փաթեթավորմամբ:	KIT RAL STAINBOX MCDH	Sysmex (RAL Diagnostics)	Ֆրանսիա
60.	Խնամքի հավաք e 411-ի կես տարվա համար	Խնամքի հավաքe 411-ի համար, լրակազմը պարունակում է Nozzle seal pipetor, Tube for pinch(2PCS/180mm, Seal piieceP, seal Pice S, Tube465, tube 510, Mixing belt 3IM, Packing L443085, բաղադրիչները գործարանային փաթեթավորմամբ:	KIT MAINTENANCE E2010 / E411 6 MONTHS	Roche Diagnostics	Ճապոնիա
61.	Խնամքի հավաք e 411-ի մեկ տարվա համար	Խնամքի հավաքe 411-ի համար, լրակազմը պարունակում է Tube for siper syring,Siper nozzle seal set2, Spring, Tube BW for measuring cell,Tube BW for sipper, O-ring NBR P4L456001, O-ring NBR P5, բաղադրիչները գործարանային փաթեթավորմամբ	KIT SERVICE E411 12 MONTH	Roche Diagnostics	Ճապոնիա

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	Հ/մ	Քանակ	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	Գնման ժամանակացույց՝ 2019թ.,	
						3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 29.11.2019թ.
11.	C -Ռեակտիվ սպիտակուց թեսթ	հատ	8	142,000	1,136,000	5	3
12.	Հիմնային ֆոսֆատազա 200 թեսթ	լրակազմ	16	15,000	240,000	8	8
13.	Մագնեզիում 100 թեսթ	լրակազմ	8	16,000	128,000	4	4
15.	հալոգեն լամպ LAMP HALOGEN 12V/20W ASSY	հատ	10	45,000	450,000	10	
16.	Combur- 10 UX	հատ	20000	200	4,000,000	10000	10000
18.	FINNTIP 2.5ML ծայրադիր	հատ	1000	2,215,4	2,215,400	500	500
20.	Պրեսիկոնտրոլ TnT 4X2 ml	լրակազմ	1	17,850	17,850	1	
21.	Պրեսիկոնտրոլ Multimarker 6X2ml	լրակազմ	2	86,700	173,400	1	1
30.	Դեպրոտեինայզեր 125 մլ	հատ	10	14,000	140,000	5	5
32.	Գլյուկոմետրի ստրիպներ N50	լրակազմ	150	3,950	592,500	100	50
35.	Պանկրեատին-ամիլազա, 15 թեսթ	լրակազմ	40	17,000	680,000	20	20
36.	Ամիլազա 15 թեսթ	լրակազմ	50	14,500	725,000	25	25
37.	Խոլեսթերոլ, 30 թեսթ	լրակազմ	100	25,000	2,500,000	50	50
38.	Կրեատինին կինազա 15 թեսթ	լրակազմ	20	19,000	380,000	10	10
39.	Կրեատինին 30 թեսթ	լրակազմ	110	28,000	3,080,000	50	60
40.	ALS 30 թեսթ	լրակազմ	110	28,000	3,080,000	50	60

41.	AUS 30 թեսթ	լրակազմ	110	28,000	3,080,000	50	60
42.	Տրիգլիցերիդների 30 թեսթ	լրակազմ	50	28,000	1,400,000	25	25
43.	Միզանյութ 15 թեսթ	լրակազմ	110	14,500	1,595,000	50	60
45.	Ամիլազա Պանկրեատիկ 200 թեսթ	լրակազմ	2	30,600	61,200	1	1
46.	Կալցիտոնին CS կալիբրատոր	լրակազմ	1	272,000	272,000	1	
47.	Պրո-GRP CS կալիբրատոր	լրակազմ	1	262,000	262,000	1	
48.	Ցիտոմեգալովիրուս 1X50LC Nano	լրակազմ	1	305,000	305,000	1	
49.	Տրանսպորտային միջավայր Uniter նմուշառման համար ստերիլ, տամպոնը և փորձանոթը միջավայրով, N1	հատ	2000	146	292,000	1000	1000
51.	Հալոգենային լամպ Cobas 400 plus-ի համար 12Վ/100Վատ	հատ	2	65,000	130,000	1	1
53.	LC109 զտիչ	լրակազմ	2	230,000	460,000	2	
54.	LC174 քարթրիջներ	լրակազմ	4	220,000	880,000	4	
55.	LC177 նախնական զտիչ	լրակազմ	4	460,000	1,840,000	4	
56.	LC180 ռեերսիոսմոսային զտիչ	լրակազմ	1	1,300,000	1,300,000	1	
57.	Ral StainBox սարքի ներկերի հավաքածու	լրակազմ	1	110,000	110,000	1	
60.	Խնամքի հավաք e 411-ի կես տարվա համար	լրակազմ	1	100,000	100,000	1	
61.	Խնամքի հավաք e 411-ի մեկ տարվա համար	լրակազմ	1	160,000	160,000	1	

Ապրանքները պետք է մատակարարվեն ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա:

Ապրանքները պետք է ունենան.

1. Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):

2. Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP, CE Mark կամ այլ):

3.Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր:

4.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:

****թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ***

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
Տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-9/9-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									
				Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝					
Հ/հ	CPV կոդ	Անվանում	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10-ը	Ընդամենը
11.	33691162/124	C -Ռեակտիվ սպիտակուց թեսթ	1,136,000	710,000	710,000	1,136,000	1,136,000	1,136,000	1,136,000
12.	33691420/1077	Հիմնային ֆոսֆատազա 200 թեսթ	240,000	120,000	120,000	240,000	240,000	240,000	240,000
13.	33691420/454	Մագնեզիում 100 թեսթ	128,000	64,000	64,000	128,000	128,000	128,000	128,000
15.	33691167/55	հալոգեն լամպ LAMP HALOGEN 12V/20W ASSY	450,000	450,000	450,000	450,000	450,000	450,000	450,000
16.	33691162/125	Combur- 10 UX	4,000,000	2,000,000	2,000,000	4,000,000	4,000,000	4,000,000	4,000,000
18.	33691162/100	FINNTIP 2.5ML ծայրակիր	2,215,400	1,107,700	1,107,700	2,215,400	2,215,400	2,215,400	2,215,400
20.	33691400/45	Դրեսիկոնտրոլ TnT 4X2 ml	17,850	17,850	17,850	17,850	17,850	17,850	17,850
21.	33691400/53	Դրեսիկոնտրոլ Multimarker 6X2ml	173,400	86,700	86,700	173,400	173,400	173,400	173,400
30.	33691162/96	Դեպրոտեինայզեր 125 մլ	140,000	70,000	70,000	140,000	140,000	140,000	140,000
32.	33691420/1081	Գլյուկոմետրի ստրիպներ N50	592,500	394,605	394,605	592,500	592,500	592,500	592,500
35.	33691420/498	Պանկրեատին-ամիլազա, 15 թեսթ	680,000	340,000	340,000	680,000	680,000	680,000	680,000
36.	33691420/499	Ամիլազա 15 թեսթ	725,000	362,500	362,500	725,000	725,000	725,000	725,000
37.	33691420/500	Լոլեսթերոլ, 30 թեսթ	2,500,000	1,250,000	1,250,000	2,500,000	2,500,000	2,500,000	2,500,000
38.	33691420/992	Կրեատինին կինազա 15 թեսթ	380,000	190,000	190,000	380,000	380,000	380,000	380,000

39.	33691420/993	Կրեատինին 30 թեսթ	3,080,000	1,398,320	1,398,320	3,080,000	3,080,000	3,080,000	3,080,000
40.	33691420/994	ALS 30 թեսթ	3,080,000	1,398,320	1,398,320	3,080,000	3,080,000	3,080,000	3,080,000
41.	33691420/995	AUS 30 թեսթ	3,080,000	1,398,320	1,398,320	3,080,000	3,080,000	3,080,000	3,080,000
42.	33691420/996	Տրիգլիցերիդների 30 թեսթ	1,400,000	700,000	700,000	1,400,000	1,400,000	1,400,000	1,400,000
43.	33691420/997	Միզանյութ 15 թեսթ	1,595,000	724,130	724,130	1,595,000	1,595,000	1,595,000	1,595,000
45.	33691420/1030	Ամիլազա Պանկրեատիկ 200 թեսթ	61,200	30,600	30,600	61,200	61,200	61,200	61,200
46.	33691420/1002	Կալցիտոնին CS կալիբրատոր	272,000	272,000	272,000	272,000	272,000	272,000	272,000
47.	33691420/1003	Պրո-GRP CS կալիբրատոր	262,000	262,000	262,000	262,000	262,000	262,000	262,000
48.	33691420/1005	Ցիտոմեգալովիրուս 1X50LC Nano	305,000	305,000	305,000	305,000	305,000	305,000	305,000
49.	33691167/57	Տրանսպորտային միջավայր Uniter նմուշառման համար ստերիլ, տամպոնը և փորձանոթը միջավայրով, N1	292,000	146,000	146,000	292,000	292,000	292,000	292,000
51.	33691167/68	Հալոգենային լամպ Cobas 400 plus-ի համար 12Վ/100Վատ	130,000	65,000	65,000	130,000	130,000	130,000	130,000
53.	33691420/1044	LC109 զտիչ	460,000	460,000	460,000	460,000	460,000	460,000	460,000
54.	33691420/1045	LC174 քարթրիջներ	880,000	880,000	880,000	880,000	880,000	880,000	880,000
55.	33691420/1046	LC177 նախնական զտիչ	1,840,000	1,840,000	1,840,000	1,840,000	1,840,000	1,840,000	1,840,000
56.	33691420/1047	LC180 ռեերսիոսմոսային զտիչ	1,300,000	1,300,000	1,300,000	1,300,000	1,300,000	1,300,000	1,300,000
57.	33691420/1048	Ral StainBox սարքի ներկերի հավաքածու	110,000	110,000	110,000	110,000	110,000	110,000	110,000
60.	33691420/1051	Խնամքի հավաք e 411-ի կես տարվա համար	100,000	100,000	100,000	100,000	100,000	100,000	100,000
61.	33691420/1052	Խնամքի հավաք e 411-ի մեկ տարվա համար	160,000	160,000	160,000	160,000	160,000	160,000	160,000

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
Տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-9/9-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դրտս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-9/9-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն